ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 04

«ԶԱՌԻԹԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ_Ի ՀԵՏ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Զառիթափի բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից 2020 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվն ու ելնելով համայնքի կարիքների համար գյուղատնտեսական, ջրագծերի, ճանապարհների սպասարկման, աղբահանման, սանիտարական մաքրման և այլ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունից.

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 436-րդ հոդվածի դրույթներով, ***որոշում եմ՝***

1. «Զառիթափի բարեկարգում» ՀՈԱԿ-ի հետ կնքել դրամաշնորհի հատկացման և աշխատանքների կատարման պայմանագրեր:

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4637 «-Ընթացիկ դրամաշնորհներ՝ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով 32415000 /երեսուներկու միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար/ դրամ, իսկ տնտեսագիտակն դասակարգման 4655 «-Կապիտալ դրամաշնորհներ՝ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով 16820500 /տասնվեց միլիոն ութ հարյուր քսան հազար հինգ հարյուր/ դրամ փոխանցել ՀՈԱԿ-ի համապատասխան բանկային հաշվին՝ համայնքի կարիքների համար անհրաժեշտ գոյուղատնտեսական, ջրագծերի ու ճանապարհների սպասարկման և այլ աշխատանքների ու ՀՈԱԿ-ի

պահպանության ծախսերի իրականացման, ինչպես նաև ՀՈԱԿ-ի համար տրանսպորտային սարքավորումներ, այլ մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:

3. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 05 բաժնի 01 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարման 4637 «-Ընթացիկ դրամաշնորհներ՝ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով 6824000 /վեց միլիոն ութ հարյուր քսանչորս հազար/ դրամ փոխանցել ՀՈԱԿ-ի համապատասխան բանկային հաշվին՝ համայնքի կարիքների համար անհրաժեշտ աղբահանման, սանիտարական մաքրման, բարեկարգման և այլ աշխատանքների ու ՀՈԱԿ-ի պահպանության ծախսերի իրականացման նպատակով:

4. Հանձնարարել «Զառիթափի բարեկարգում» ՀՈԱԿ-ին աշխատանքների իրականացումից հետո Զառիթափի համայնքապետարանին ներկայացնելու կատարված աշխատանքների և ծախսերի մասին սահմանված ձևի հաշվետվություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 05

«ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ » ՀՈԱԿ_Ի ՀԵՏ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Զառիթափ համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի կողմից 2020 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվն ու ելնելով համայնքի կարիքների համար նախադպրոցական կրթության աշխատանքների իրականացման անհրաժեշտությունից.

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդհոդվածի 7-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 436-րդ հոդվածի դրույթներով, ***որոշում եմ՝***

1. «Զառիթափ համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի հետ կնքել դրամաշնորհի հատկացման և աշխատանքների կատարման պայմանագրեր:

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 09 բաժնի 01 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4637 «-Ընթացիկ դրամաշնորհներ՝ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով 27325000 /քսանյոթ միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար/ դրամ, իսկ տնտեսագիտակն դասակարգման 4655 «-Կապիտալ դրամաշնորհներ՝ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով 650000 /վեց հարյուր հիսուն հազար/ դրամ փոխանցել ՀՈԱԿ-ի համապատասխան բանկային հաշվին՝ համայնքի կարիքների համար անհրաժեշտ գոյուղատնտեսական, ջրագծերի ու ճանապարհների սպասարկման և այլ աշխատանքների ու ՀՈԱԿ-ի պահպանության ծախսերի

իրականացման, ինչպես նաև ՀՈԱԿ-ի համար տրանսպորտային սարքավորումներ, այլ մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:

3. Հանձնարարել «Զառիթափ համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ին աշխատանքների իրականացումից հետո Զառիթափի համայնքապետարանին ներկայացնելու կատարված աշխատանքների և ծախսերի մասին սահմանված ձևի հաշվետվություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 06

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 10-022-0070-0022 0.0895 ՀԱ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24 -րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387—Ն որոշմամբ, ***որոշում եմ՝***

Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի հողերից ծածկագիր՝ 10-022-0070-0022 0,0895 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատեսքը հասցեավորել Զառիթափ համայնք Զառիթափ բնակավայր 7 փողոց 3փակուղի 5 հասցեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**